

ՍՈՆԱ ԱԶԱՏՅԱՆ

ԲԱՌԱՎԵՐՋԸ ԱՐԴԻ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Արդի հայերենի բառավերջի կազմության օրինաչափությունները թե հնչյունաբանական, թե հնչյունախոսական տեսակետից մեծ կարևորություն են ներկայացնում: Այս օրինաչափությունները պայմանավորված են տվյալ լեզվի պատմական զարգացմամբ և արտասանական որոշ կարողությունների տեսակետից բնորոշում են նրա ինքնատիպությունն ու անկրկնելիությունը այլ լեզուների նկատմամբ:

Ինչպես ամեն մի լեզու, այնպես էլ հայերենն ունի իրեն հատուկ հնչյունների զուգորդելիության կանոնները: Դասական հայերենի համար այս հարցի մանրամասն քննությամբ զբաղվել է Էդ. Աղայանը: Սակայն ինչ վերաբերում է արդի հայերենի բառավերջին, պետք է ասենք, որ հանգամանալից ուսումնասիրություններ չկան:

Փորձենք պարզել, թե հնչյունազուգորդումների տեսակետից ինչ կազմություն ունի բառավերջը արդի հայերենում, և թե ինչ տարբերություններ են նկատվում հայերենի դասական շրջանի համեմատությամբ:

Սկսենք բառավերջի մեկ ծայնավորից: Այս առումով մի շարք տարբերություններ կան հայերենի երկու շրջանների միջև: Նախագրային շրջանի այն կանոնը, որ բառը ծայնավորով չէր կարող վերջավորվել, դասական հայերենում արդեն խախտվել էր: Սակայն, այնուամենայնիվ, ոչ բոլոր ծայնավորները կարող էին լինել բառավերջում:

Ա ծայնավորը նորագույն փոխառությունների պատճառով արդի հայերենում կարող է հաջորդել գրեթե բոլոր բաղաձայններին, ինչպես՝ *աներկբա, ապագա, թամադա, բազա, շոթա, բիրժա, օսլա, երեխա, ընժա, բացակա, աժդահա, տղա, թեմա, ապակյա, մեքենա, փաշա, քամանչա, կապա, փարաջա, ծառա, մուսա, թավա, պողոտա, օպերա, մատրիցա, փիլիսոփա, արքա, խալիֆա** և այլն: Գրաբարում ա ծայնավորով վերջավորվում էին *ահա, ապա* (նաև *ապայ*) բառերը, *սա, դա, նա* դերանուններն իրենց հոլովածներով, ա և ե խոնարհման պարզ բայերի եզակի հրամայականը (*գնա՛, աղա՛*), *իմանա՛մ*,

* Բառերը դասավորված են բառավերջի ծայնավորին նախորդող բաղաձայնների այբբենական կարգով:

առնեն, մոռանամ, ընթանամ բայերի եզակի հրամայականը (*իմա՛, արա՛, մոռա՛, ընթա՛*) և մի շարք փոխառյալ անձնանուններ (*Կատինա, Շաղիտա* և այլն): Ինչպես տեսնում ենք, և-ով վերջավորվող բառերի թիվը սահմանափակ է: Պատճառն այն է, որ դասական հայերենում բառավերջում ա-ից հետո հնչվում և գրվում էր յ հնչյունը: Հ. Աճառյանը, նշելով, որ եվրոպացի շատ հայագետներ բառավերջի այ կապակցությունը համարում են ձայնավորի ու բաղաձայնի կապակցություն, գրում է «Սրան թերևս իբրև ապացույց ծառայի այն կրկնակ ձայնափոխությունը, որին ենթարկված է վերջավանկի այ՝ կովկասյան բարբառներում. այսպես՝ *տղայ, փեսայ=տղա, փեսա, բայց տղայն, փեսայն=տղեն, փեսեն*»:¹ Ընդունելով, որ որոշյալ ձևերի մեջ բաղաձայնի մոտ այ-ը երկբարբառ է, հեղինակը գտնում է, որ առանց հոդի ձևերն էլ պիտի դառնան բաղաձայնավոր, քանի որ մյուսից տարբեր ձայնափոխության են ենթարկվում: Եդ. Աղայանը ավելացնում է, որ նույնպիսի՝ երկակի հնչյունափոխություն կա նաև ուղղականի եզակի և հոգնակի ձևերում: Օրինակ՝ *տղայ, փեսայ>տղա, փեսա, բայց՝ տղայք, փեսայք>տղէք, փեսէք*, նույնիսկ՝ *քահանայ>քահանա, բայց քահանայք>քահանէք*, որ իբրև կրոնական բառ ավելի պահպանողական պիտի լիներ:²

Այսպիսով, եթե *տղա, քահանա, փեսա* բառերը արդի հայերենում ա ձայնավորով վերջավորվող բառեր են, ապա գրաբարում դրանք, կարելի է ասել, բաղաձայնով վերջացող բառեր էին:

Ինչպես դասական հայերենում, այնպես էլ արդի հայերենում բառերը կարող են ավարտվել ի և ու ձայնավորներով, օրինակ՝ *կղզի, որդի, գետածի, կիրակի, գուրդի, առու, այցելու, մրգատու, օղաչու* և այլն:

Ի ձայնավորը բառավերջում կարող է լինել ածանց, օրինակ՝ *իրասածի, հոգի, շոգի, կատվազգի, աղի, բնակատեղի, ծարավի*. Սրանով են կազմվում նաև բուսանունները՝ *թխկի, կաղամախի, կաղնի* և այլն: Հաճախ ի ձայնավորը հանդիպում է -ուիի, -ենի, -ացի, -եցի, և այլ ածանցներով կազմված բառերի բառավերջում, ինչպես՝ *թագուհի, աստվածուհի, բալենի, խնձորենի, խալացի, գյուղացի, սարեցի* և այլն:

Ու ձայնավորը բառավերջում արդի ըմբռնմամբ կարող է լինել թե՛ ածանց, թե՛ արմատի բաղադրիչ, օրինակ՝ *քնարերգու, ազդու, վերարկու, կենսատու, մրգատու* և այլն:

Բառավերջի ո[օ] ձայնավորը դասական հայերենում սահմանափակ կիրառություն ուներ: Սրանով էին վերջավորվում *քո* դերանունը (դու անձնական

¹ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 584:

² Տե՛ս Եդ. Աղայան, Գրաբարի քերականություն, Երևան, 1964, էջ 115:

դերանվան սեռականը) և պատճառական բայերի եզակի հրամայականը՝ *մատո՛ւ, փախո՛ւ*: Մնացած դեպքերում բառավերջի ո-ից հետո հնչվում և գրվում էր յ բաղաձայնը (*հաճո՛յ, երեկո՛յ*): Հ. Աճառյանը բառավերջի ոյ կապակցությունը համարում է այ-ի զուգահեռ ձևը. «Այ երկբարբառի հետ համեմատելի է ոյ: Ոյ, ինչպես և այ, երկու տարբեր ձև ունեն հայերենում, մեկն իբր երկբարբառ, մյուսը իբրև բաղաձայնավոր վանկ»:³

Արդի հայերենում կան փոփոխություններ, սակայն մեծ թիվ չեն կազմում: Բացի գրաբարից ավանդված բառերից (*երեկո, հաճո, հետո*) ո-ն հիմնականում հանդիպում է օտար բառերի բառավերջում, ինչպես՝ *մանգո, մետրո, բյուրո, ալեգրո, կինո* և այլն: Կան նաև -ածո ածանցով կազմված բառեր՝ *դրածո, չափածո, համածո, քրածո*:

Ի տարբերություն դասական հայերենի, որտեղ բառերը չէին կարող վերջավորվել ե[ն] և ը ծայնավորներով՝ արդի հայերենն ունի մի քանի այսպիսի բառեր: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենում բառավերջի ե ծայնավորը բառերի մեծ մասում առաջացել է յա երկհնչյունի հնչյունափոխությամբ, ինչպես՝ *աղամանդե, ծենապակե, ավազե, երկաթե, մախօրե, միջօրե* և այլն:

Գրաբարում նույնիսկ միավանկ բառերի բառավերջում, որտեղ ենթադրվում էր ե ծայնավոր, համաբանությամբ վերածվում էր է-ի (*թե>թէ*): Արդի հայերենն ունի այս և նման բառերի ե-ով ձևը՝ *թե, եթե, գրեթե, մի՞թե*: Իսկ բառավերջում հնչվում և գրվում է է միայն այն դեպքում, երբ այն արմատ է, ինչպես՝ *մանրե, երբևէ, ինչևէ, որևէ, ովևէ* և այլն:

Ը ծայնավորը արդի հայերենում հանդիպում է հետևյալ բառերի բառավերջում՝ *ընդամենը, վաղը, ընդհակառակը, իսկը, տեղնուտեղը, դառը, խառը, սառը, ամենքը, տասը*: Քանի որ գրաբարում բառավերջի դիրքում ը չկար, չէր կարող լինել նաև ը հոդը, որ առկա է արդի հայերենում՝ *տունը, անտառը, մարդը, աղջիկը* և այլն: Արդի հայերենում բառավերջի ը որոշյալ հոդը որոշ դեպքերում փոխարինվում է ն-ով: Օրինակ՝ հնչյունաշղթայում հաջորդող ծայնավորից առաջ առկա է ը-ն անցում. հմմտ. «*Տունը կանգուն է*» բայց՝ «*Տունն ավերակ է*»: Նման փոփոխության է ենթարկվում նաև ը արմատահնչյունը, ինչպես՝ *տասը>տասնամյակ, ինը>իննսուն, սառը>սառնորակ, դառը>դառնահամ* և այլն: Ը-ի փոխարեն արտասանում և գրում ենք ն՝ Արեղյանի տերմինավորմամբ հորանջից խուսափելու համար: Արևելահայերենում որոշիչ հոդ են ստանում նաև բոլոր անձնանունները, ինչը չի կարելի ասել արևմտահայերենի մասին: «Արևմտահայ լեզվում, - գրում է Հ. Աճառյանը, - միայն նշանավոր մարդկանց անուններն են, որ չեն ստանում որոշիչ հոդ, իսկ

³ Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց գրերը, Երևան, 1984, էջ 584:

սովորական մարդկանց անունները ստանում են: Օրինակ, ասում են. «Հայկ հայոց ազգին նահապետն է, Մեսրոպ հնարեց մեր այբուբենը, Վարդան Աւարայրի հերոսն է, Մեծն Պետրոս հիմնեց Բեդրսպուրկ մայրաքաղաքը, բայց սրանց դեմ՝ «եղբայրս» Հայկը վաղամեռիկ եղաւ, Մեսրոպը մեր դրացին է, ու՞ր գնաց Վարդանը և այլն»:⁴

Արդի հայերենին ծայնավորների զուգորդումները բնորոշ չեն, և եթե երկու ծայնավոր հանդիպում են բառասկզբում, բառամիջում կամ բառավերջում, նրանց միջև արտասանվում է յ ծայնակապ, կամ երբեմն՝ վ անցումային բաղաձայն: Բնիկ հայերեն բառերի բառավերջում ծայնավորների զուգորդումներ չեն հանդիպում: Բառավերջի գրությամբ իա, եա ոա, ուա, աո, իո զուգորդություններով կազմված բառերն օտար են, օրինակ՝ *ասամբլեա, հրեա, էներգիա, մատերիա, դիֆուզիա, կոալիցիա, բամիա, սիմֆոնիա, ակացիա, բոա* (վիշապօծի տեսակ), *բուրժուա, ռադիո, սոլֆեջիո, կակաո* և այլն: Եա, իա, իո զուգորդություններն արտասանվում են որպես յա և յո երկինջյուններ, իսկ *ասամբլեա* բառի եա կապակցությունն արտասանվում է յ ծայնակապով: *Կակաո* բառի աո զուգորդության մեջ կա թույլ, գրեթե չլսվող անցումային վ, *բուրժուա, բոա* բառերի ուա, ոա կապակցություններն արտասանվում են որպես *ua, oa* (երկբարբառակերպ):

Արդի հայերենի բնիկ հայերեն և հնագույն փոխառյալ բառերի բառավերջում ա+ծայնավոր կամ ո+ծայնավոր կապակցություններ չկան, քանի որ ա-ից և ո-ից հետո միշտ գրվում և արտասանվում է յ: Գրությամբ եի կապակցությամբ են կազմվում ըղծական եղանակի եզակի առաջին դեմքի ե խոնարհման բայերը, օրինակ՝ *լինեի, գրեի, բերեի, երգեի, լսեի* և այլն, սակայն սրանց միջև կա յ ծայնակապ: Գրային արտասանության միտումը ներկայումս այնքան ուժեղ է, որ երբեմն խախտվում է նաև շատ գործածական, ավանդական հաստատուն արտասանություն ունեցող բառերի հնչումը: Այդ է պատճառը, որ վերոհիշյալ բառերը երբեմն արտասանվում են առանց յ-ի:

Ի տարբերություն մի շարք լեզուների՝ հայերենում գրեթե բոլոր բաղաձայնները կարող են գտնվել բառավերջում: Օրինակ՝ ուրիշ հին հնդեվրոպական լեզուներում բառը կարող էր վերջանալ միայն որոշ բաղաձայններով, ինչպես՝ հունարեն *ν, σ, ρ*, լատիներեն *s, r, m*, հին պարսկերեն *m, š, r* և այլն:⁵ Այսինքն՝ բառավերջը հայերենի բաղաձայնների համար ուժեղ հնչյունադիրք է՝ *թումբ, երանգ, տաղանդ, ընկույզ, խենթ, վարժ, հանկարծ, խարիսխ, թանկ, պատերազմ, կանչ, պարիսպ* և այլն:

⁴ Տե՛ս Գ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Երևան, 1951, էջ 558:

⁵ Տե՛ս Գ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 6, Երևան, 1971, էջ 573:

Բառավերջում կարող են լինել միևնույն շարքի ծայնեղ, խուլ և շնչեղ խուլ բաղաձայններ՝ ստեղծելով երկաստիճան կամ եռաստիճան հակադրություններ, որոնք իմաստագատիչ արժեք ունեն։ Օրինակ՝ *գիրգ-գիրկ-գիրք, վարգ-վարկ-վարք, հարդ-հարթ, խագ-խաս, կտրիչ- կտրիճ, շտաբ-շտապ, դուրդում, ուժ-ուշ, կաղ-կախ* և այլն։

Շատ հաճախ բառավերջում ր, դ բաղաձայններից և ծայնավորներից հետո նկատվում է ծայնեղների շնչեղ խլացում, ինչպես՝ *կարգ-[կարք], սուրբ - [խուրփ], երբ- [երփ], վարդ-[վարթ], ողջ-[ոխշ], շոգ-[շոք], մուգ-[մուք]* և այլն։ Որոշ դեպքերում էլ ծայնեղները խլանում են՝ *ողբ-[ոխալ], աղբ- [ախալ]*։

Սեր կատարած ուսումնասիրությունները փաստում են, որ արդի հայերենի բառավերջում բաղաձայնները ոչ բոլոր ծայնավորներին կարող են հաջորդել։ Օրինակ՝ չեն հանդիպել *ծայնավոր+ծ* կապակցությամբ բառեր, բացառությամբ *օծ* բառի, որտեղ ծ-ն ց հնչույթի գրային նշանն է։ Անդրադառնալով բառավերջի վ բաղաձայնին՝ նշենք, որ այն հաջորդում է ո, ա, ի ծայնավորներին՝ *ծով, հով, հավ, նավ, ցավ, թիվ, հաշիվ* և այլն։ Բառավերջում ե[լ] ծայնավորից հետո վ չի գրվում, քանի որ եվ կապակցությունն արտահայտվում է և գրանշանով (*տներ, բարև, անձրև, արև*)։ Դասական հայերենում ա, ե, ի ծայնավորներից հետո՝ գրվում էր այս տառին հնչույթաբանորեն նույնական *ւ* (*թաւ, բանիւ, թել*)։ Միայն ո-ից հետո էր գրվում վ, որովհետև *ւ* գրելու դեպքում կստացվեր ու տառը։

Արտասանության տեսակետից բառավերջը զգալիորեն տարբերվում է բառասկզբից։ Բառավերջում առանց գաղտնավանկ ը-ի կարող են արտասանվել երկու և ավելի բաղաձայններ։ Նույն հնչյունների զուգորդությունը բառասկզբում և բառավերջում տարբեր արտասանություն ունի. հմմտ. *թանկ և ն[ը]կար, կազմ և գ[ը]նայլվել, հրաշք և շ[ը]քեղ, զմրուխտ-խ[ը]տրականություն* և այլն։ Այսինքն, եթե բառասկզբում նկ, զմ, խտ, շք կապակցություններն արտասանվում են գաղտնավանկ ը-ով, ապա բառավերջի նույն կապակցություններն արտասանվում են առանց ը-ի։

Փաստերը վկայում են, որ առանց ը-ի արտասանվող երկու բաղաձայններից առաջինը մեծ մասամբ ծայնորդ է՝ ր, ո, մ, ն, յ, կամ շփական՝ ժ, շ, գ, ս, դ, խ, վ, ֆ, հ, որ հեշտությամբ կապակցվում է հաջորդ բաղաձայնի հետ։ Օրինակ՝ *խումբ, ազգ, աղամանդ, կախարդ, համերաշխ, պատերազմ, նախշ, փայտ, կառք, գովեստ, թուխալ, գովք, աղբ[ախալ], գորշ, խարույկ, նավթ[նաֆթ], խարխախ* և այլն։ Հատկանշական է, որ հ բաղաձայնը բառավերջում կարող է հաջորդել միայն ր ծայնորդ բաղաձայնին։ Քանի որ հ-ն իր բնույթով շունչ է, հազազ, կարող է հեշտությամբ ավելանալ կամ ընկնել որոշ դիրքերում։ Օրինակ՝ *խոնարհ, ծանապարհ, աշխարհ, շնորհ* և նման բառերում ըստ

ավանդական արտասանության հ-ն հաճախ ընկնում է: Սակայն երբեմն էլ, մանավանդ ընթերցանության ժամանակ, հ-ն պահպանվում է: Այսինքն՝ նկատվում է գրային արտասանության ընդհանուր միտումը:

Ինչպես գրաբարին, այնպես էլ արդի հայերենին բառավերջում ծայնորդ+ծայնորդ կապակցությունները բնորոշ չեն: Բացառություն են կազմում ր+մ և յ+ծայնորդ կապակցությունները, ինչպես՝ *թարմ, ջերմ, սերմ, որմ, քուրմ, սայլ, փայլ, ծույլ, վայր, մայր, համբույր, սակայն, ծայն, թույն, ժայռ* և այլն:

Վերջին շրջանում ժամանակակից հայոց լեզվի բառապաշար են մուտք գործել բառավերջի ծայնորդ+ծայնորդ կապակցությամբ մի շարք բառեր՝ *ֆիլմ, կոնցեռն, նոկտյուրն, մոդեռն, էքստենզ*։ Եթե գրային ձևում հանդիպում են ծայնորդների կապակցություններ, ապա դրանց միջև արտասանվում է գաղտնավանկ ը, օրինակ՝ *համ[ը]ր, երբեմ[ը]ն, անհիմ[ը]ն, ժան[ը]ր, ժան[ը]ր, բարեխառ[ը]ն, բուռ[ը]ն* և այլն: Սեզ թվում է՝ այս շարքից պետք է առանձնացնել *եղեռն, առձեռն* բառերը, որոնք հնչվում են առանց ը-ի կամ թույլ ը-ով:

Ինչպես տեսնում ենք, վերոհիշյալ բոլոր բառերը վերջավորվում են ն և ը ծայնորդներով: Բառավերջում երկու բաղաձայնների միջև պարտադիր կա ը ծայնավոր նաև, եթե դրանք պայթական+ռ կամ ղ և շփական+ծայնորդ (եթե մ-ն չէ) կապակցություններն են՝ *անգ[ը]ղ, արկ[ը]ղ, կոծ[ը]ղ, աստ[ը]ղ, գամփ[ը]ռ, կայս[ը]ր, եզ[ը]ր*։ Սրանք հայերենի այսպես կոչված մեկուկես վանկանի բառերն են, որ հաճախ համարվում են միավանկ, հաճախ էլ՝ երկվանկ, հետևաբար դժվարություններ են հարուցում հոգնակի թվի կազմության ժամանակ: Այս մասին Յ. Աճառյանը իր «Լիակատար քերականության» մեջ գրում է. «Այն բառերը, որոնք իրենց վերջին վանկում ունեն ը ծայնավորը, տատանվում են երկուսի միջև. արևելյան գրականում համարվելով բազմավանկ՝ ստանում են մեր մասնիկը, իսկ արևմտյան գրականում՝ համարվում են միավանկ և ստանում եր մասնիկ. ինչ. աստղ-աստղներ, աստղեր, կայսր-կայսրներ, կայսրեր, արկղ-արկղներ, արկղեր, տարր-տարրներ, տարրեր, սանր-սանրներ, սանրեր»:⁶

Էդ. Աղայանը նորմատիվ է համարում նման բառերի հոգնակի թվի կազմության եր-ով ձևը:

Ա. Այտընյանը իր «Քննական քերականության» մեջ արևմտահայերենի համար օրինաչափ էր համարում նման բառերի մեր-ով հոգնակին՝ ոսկրներ, աստղներ:⁷

Հիշյալ բառերի հոգնակիի եր-ով կազմությունը հաստատում է նաև Յ. Պետրոսյանը՝ գտնելով, որ բաղաձայն+(ը)ր, մասամբ նաև բաղաձայն+(ը)ն

⁶ Տե՛ս Յ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, Խ. III, Երևան, 1957, էջ 818:

⁷ Տե՛ս Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 5:

կապակցությունները հոգնակերտից առաջ վերակազմավորվելով դառնում են բաղաձայն+ր կամ բաղաձայն+ն:⁸

Բառակազմության ժամանակ ևս, երբ վերոհիշյալ զուգորդություններով վերջացող բառերին կցվում է ձայնավոր, բառավերջի գաղտնավանկի ընդհանուր է, ինչպես՝ աստ[ը]դ-աստղազարդ, կայս[ը]ր-կայսրություն, կարծ[ը]ր-կարծրանալ և այլն: Այս դեպքում ձայնորդները վանկ են կազմում հաջորդող ձայնավորի հետ:

Այսպիսով, այս բառերի հոգնակի թվի կազմության մեջ կան հակասություններ, քանի որ դրանք թեև երկվանկ են (աս-տըդ, կայ-սըր, ար-կըդ), սակայն հոգնակին կազմվում է միավանկ բառերի կանոնով՝ եր ավելացնելով:

Այս շարքից պետք է առանձնացնենք կրկնակ ր բաղաձայն ունեցող տարր բառը: Ըստ բառավերջի կանոնի՝ այն պետք է արտասանվի *տարր[ը]ր*, սակայն այժմ գերազանցապես հնչվում է երկար ր-ով: Այս երևույթը նկատելի է նաև *անդորր* բառում: Օտար բառերի բառավերջի նույնական բաղաձայնների գրությունը ունի ձևական նշանակություն, քանի որ սրանք կարող են արտաբերվել որպես տևական բաղաձայն կամ մեծ մասամբ մենաբաղաձայն, ինչպես՝ *միսս[միս], բոնն[բոն], բոսս[բոս]* և այլն:

Բաղաձայն+լ կապակցությամբ վերջավորվող բառեր արդի հայերենում չեն հանդիպում: Կան միայն *ցիկլ, մոնոկլ, անսամբլ* օտար բառերը, որ արտասանվում են գաղտնավանկով: Բացառություն է կազմում բառավերջի յլ կապակցությունը՝ *փայլ, գայլ, սայլ, բույլ, ծույլ, ծուլ* և այլն: Չայնավորին հաջորդող լ-ի առանձնահատկությունն այն է, որ ա-ին և ե-ին հաջորդող լ-ով վերջավորվող բառերի մեծ մասը բայեր են, այսինքն՝ լ-ն այստեղ բայակերտ ածանց է (*խաղալ, հեռանալ, վազել, խնդրել* և այլն):

Շփական+ձայնորդ կապակցությունը հնչվում է առանց գաղտնավանկ ը-ի, եթե ձայնորդ բաղաձայնը մ-ն է, ինչպես՝ *ամրակազմ, միակազմ, պատերազմ, հաշմ, դրոշմ* և այլն: Այսպիսի կապակցություններով են վերջավորվում հատկապես իզմ ածանցով կազմված նորաստեղծ բառերը՝ *աթեիզմ, սոցիալիզմ, աֆորիզմ, ռոմանտիզմ, ռեալիզմ, ռասիզմ, ֆաշիզմ, դրամատիզմ, սուֆիզմ* և այլն: Օտար բառերում մ-ն կարող է հաջորդել անգամ պայթական բաղաձայնի՝ *լոգարիթմ, ռիթմ, ալգորիթմ* և այլն:

Օտար բառերի բառավերջում հաճախակի է հանդիպում քս կապակցությունը, ինչպես՝ *սֆինքս, բոքս, կոմպլեքս, ռեֆլեքս, իքս, յուքս, պարադոքս, կեքս, կոդեքս* և այլն: Գրությամբ կան նաև պայթական+ս զուգորդություններ՝ *խաբս, զազս, հոզս*, որոնցում արտասանության ժամանակ ձայնեղները շնչելով լուսնում են (*խափս, զաքս, հոքս*) և այլն):

⁸ Տե՛ս Գ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972, էջ 257-258:

Ըստ Թ. Ղարազյուլյանի՝ պայթական+ծայնորդ կապակցություններում բառավերջի ծայնորդներից առաջ ը-ի արտասանությունը, ինչպես նաև բառի ածման ժամանակ նրա անկումը (ծայնավոր հաջորդելու դեպքում) ոչ թե հայերենին հատուկ երևույթ է, այլ պայմանավորված է առհասարակ ծայնորդների արտասանական առանձնահատկություններով, որոնք պահանջում են որևէ հենարան ծայնավոր իրենցից առաջ կամ հետո. հմնտ. *վագ[ը]ր* և ռուս. *мур[ѣ]р*։⁹

Ինչպես դասական հայերենում, այնպես էլ արդի հայերենում չեն հանդիպում պայթական+պայթական կապակցություններով (ղկ, դպ, կթ, բտ և այլն) վերջավորվող բառեր։ Միակ բացառությունը *ցատկ* բառն է, որ կազմվել է *ցատկել* բայից վերջավորության սղումով։ Կան նաև նման չնչյունակապակցություններով օտար բառեր՝ *տակտ*, *օբյեկտ*, *էֆեկտ* և այլն։

Արդի հայերենում բառավերջում երեք բաղաձայններ կարող են կապակցվել միայն այն դեպքում, երբ նրանցից վերջինը նախկին հոգնակերտ ք-ն է, օրինակ՝ *քայլք*, *ինչք*, *քղանցք*, *լեռնանցք*, *պարտք*, *լուսանցք* և այլն։ Երեք բաղաձայն հնչյունների կապակցությունները բառավերջում հանդիպում է նաև փոխառյալ բառերում, ինչպես՝ *տեքստ*, *սվինքս*, *ինֆարկտ*, *տակտ*, *ինտելեկտ* և այլն։

Դասական հայերենում ք-ով վերջավորվող բառերը քերականական ձևեր էին, քանի, որ ք վերջավորությամբ կազմվում էր հոգնակի ուղղականը՝ *փայտք*, *հրաշք*, *ծախք*, *երկինք* և այլն։ Քանի որ գրաբարում բացառված էր պայթական+պայթական կապակցությունը, ապա բոլոր այն դեպքերում, երբ բառը եզակի ուղղականում ք-ից առաջ ունենում էր պայթական, հոգնակի ուղղականում ք-ից առաջ արտասանվում էր ը, ինչպես՝ *հարկ[ը]ք*, *սուտ[ը]ք*, *մեզ[ը]ք* և այլն։ Արդի հայերենի բառավերջում, սակայն, կան պայթական+ք զուգորդումով բառեր, որ արտասանվում են առանց ը-ի՝ *աղոթք*, *դեպք*, *հանք*, *մուտք* և այլն։

Հետաքրքրական է հատկապես գրաբարի բառավերջի աւ+ ք կապակցության արտասանությունը։ Սրանց ը-ով թե առանց ը-ի արտասանությունը էղ. Սղայանը պարզում է գործիական հոլովի կազմությամբ։ Քանի որ *քաղաքաւք*, *տեղեաւք*, և նման բառերում աւ-ը դարձել է օ (*քաղաքօք*, *տեղեօք*), այսինքն՝ հոգնակի գործիականում աւ (իւ, ով, եվ)+ ք վերջավորության մեջ ը չի արտասանվել, աւ-ը ենթարկվել է իրեն հատուկ պատմական հնչյունափոխության։ Հոգնակի ուղղականում հակառակն է . այստեղ *թաւք*, *հաւք*, *նաւք* բառերը չեն դարձել *թօք*, *հօք*, *նօք*, որ նշանակում է նրանց միջև արտասանվել է ը

⁹ Տե՛ս Թ. Ղարազյուլյան, ժամանակակից հայերենի ուղղախոսությունը, Երևան, 1974, էջ 154։

ծայնավոր՝ *նաւը, քաւը, հաւը*։¹⁰ Ի տարբերություն դասական հայերենի՝ արդի հայերենում *հավք* բառն արտասանվում է առանց ը-ի։

Արտասանական որոշ առանձնահատկություններ ունեն բառավերջի բաղաձայն+ս, դ, ն հոդեր զուգորդությունները։ Այստեղ էականն այն է, որ բառակազմությամբ պայմանավորված՝ ս, դ հոդերից առաջ, որպես կանոն, արտասանվում է ը, մինչդեռ նույն հնչյուններով վերջացող մեկ ձևույթից կազմված բառերը արտասանվում են առանց ը-ի. հմմտ. *շանս* և *շան[ը]ս, հորդ* և *հոր[ը]դ, սարդ* և *սար[ը]դ* և այլն։ Դ հոդը հաստատուն կերպով արտասանվում է տ. հմմտ. *սարդ[դ]* և *սերդ[ըտ]*։ Առանց ը-ի է արտասանվում նաև երեք բաղաձայն հնչյուններով վերջավորվող *ցանքս* բառը. հմմտ. *ցա[նքս]* և *խնդրա[նքըս]*։

Չրաբարի համար էդ. Աղայանը բերում է հետևյալ օրինակները՝ *վարս-վարըս, անունդ(անսերմ)-անունըդ* և այլն։¹¹

Այսպիսով, արդի հայերենի բառավերջում կարող են լինել բոլոր ձայնավորներն ու բաղաձայնները, ինչպես նաև օտար բառերում հանդիպում են ձայնավորների զուգորդումներ։ Ինչպես դասական հայերենում, այնպես էլ արդի հայերենում գոյծում են բառավերջի բաղաձայնների զուգորդելիության գրեթե նույն կանոնները։ Կան նաև բառավերջի երեք բաղաձայնով կապակցություններ։

¹⁰ Տե՛ս էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 250-251։

¹¹ Տե՛ս էդ. Աղայան, նշվ. աշխ., էջ 87։